ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման 2016 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրի՝ 2017 թվականի մարտի 31-ին կնքված N1 համաձայնագրում կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1- ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1251-Ն որոշմամբ նվազեցվել է ՀՀ Արագածոտնի մարզի գ.Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների համար 2017թ.-ին նախատեսված ֆինանսական հատկացման չափը:

Փոփոխության նկարագրություն - N1 համաձայնագրի 1.1.1 կետում նշված <<2 411 000 (երկու միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ >> բառերը փոխարինվել են <<1 359 800 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ>> բառերով:

Փոփոխության հիմնավորում- Պայմանագրի 7.3 կետով նախատեսված պայմանը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

/24.09.2016 թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրի/

ք. Երևան <<19>> հոկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի միջև 24.09.2016թ. կնքված ծառայությունների մատուցման N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, 31.03.2017թ. կնքված N1 համաձայնագիրը և ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1251-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Նվազեցնել Պայմանագրի 31.03.2017թ. կնքված N1 համաձայնագրի գինը 1 051 200 (մեկ միլիոն հիսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամով:

1.1.2 N1 համաձայնագրի 1.1.1 կետում նշված <<2 411 000 (երկու միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ >> բառերը փոխարինել <<1 359 800 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ>> բառերով:

1.1.3 N1 համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելված թիվ 1-ը փոխարինել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելված թիվ 1-ով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012607, ՀՎՀՀ 02565827	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ Հալաբյան 41 ա «Արդշինբանկ» ՓԲԸ, «Նաիրի» մասնաճյուղ Հ/Հ 2473700277210010, ՀՎՀՀ 01508665
	Տնօրեն՝
Աշխատակազմի ղեկավար՝	
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Գ. Արշակյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
24.09.2016 թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրի
թիվ 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 08, խումբ 02, դաս 03, ծրագիր 03)

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	-	-	-	510 300	510 300	510 300	1 359 800	1 359 800	1 359 800	1 359 800	1 359 800	1 359 800	1 359 800

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011012607,
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Մ. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՀՀ նախագծերի պետական
արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
Հալաբյան 41 ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Նաիրի>> մասնաճյուղ
Հ/Հ 2473700277210010,
ՀՎՀՀ 01508665

Տնօրեն՝

_____ Գ. Արշակյան
(ստորագրություն)

Կ.Տ.